


ԵՄ առևտրային քաղաքականությունը

Նորայր Դանիելյան



Վաղ տարիները

- Առաջին քայլերից մեկը տարիֆային միության ստեղծումն էր, որպեսզի հնարավոր լիներ վերացնել բոլոր մաքսատուրքերը Անդամ Պետությունների միջև առևտրի վրա:



Մաքսային միության ներքին և արտաքին ասպեկտները

- Մինչդեռ ապրանքների ազատ շրջանառությունը Եվրոպական Միության ներսում Մաքսային միության ներքին ասպեկտն է, Ընդհանուր մաքսային տարիֆը հանդիսանում է արտաքին ասպեկտը: Այն վերաբերում է Մաքսային միության արտաքին սահմաններով ներմուծվող ապրանքներին:



ԵՄ առևտրային քաղաքականությունը

- Աշխարհում ապրանքների և ծառայությունների արտահանումների ու ներկրումների իր մոտ 20% մասնաբաժնով Եվրոպական Միությունը հանդիսանում միջազգային առևտրի հիմնական դերակատարներից մեկը:



ԵՄ առևտրային քաղաքականությունը

ԵՄ առևտրային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը դա շուկաների բացումն է Եվրոպական արտահանումների համար,

- մի կողմից այս նպատակը հետապնդվում է բազմակողմանի մակարդակի վրա Համաշխարհային Առևտրային Կազմակերպության հետ,
- մյուս կողմից Եվրոպական Միությունը կնքել է երկկողմանի և ռեգիոնալ բազմաթիվ ազատ առևտրային համաձայնագրեր երրորդ պետությունների հետ, հաճախ նաև որպես մաս ավելի բազմակողմանի գործիքների ինչպիսիք են գործընկերության և համագործակցության համաձայնագրերը:



ԵՄ առևտրային քաղաքականությունը և զարգացող պետությունները

- Առևտրային քաղաքականությունը նաև մեծ կարևորություն ունի Եվրոպական Միության հարաբերություններում զարգացող պետությունների հետ: Մասնավորապես Աֆրիկյան պետությունները, Կարիբյան և Խաղաղ օվկիանոսի երկրները Կոտոնուի համաձայնագրով ԵՄ շուկա մուտք գործելու արտոնյալ իրավունք ունեն: